

Հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի հարցաշար - 2020 թ.

Տևողությունը 150 րոպե

12-րդ դասարան

Հնչեցին գալարափողերը, և մունետիկները տարփողեցին արքայի գալուստը: Ժողովուրդը, խոնված բոլորակաձև հրապարակում, սպասում էր սրբազան երկյուղածությամբ: Ահա երևաց Տիգրան Մեծը՝ սնդուսափայլ ծիրանին ուսերին: Կորովի հայկազունը բարձրացրեց աջ ու խոսեց՝ կաթոզին հայացքն ուղղելով բազմությանը.

– Ա՛րք և տիկնա՛յք հայոց աշխարհի, մահս մոտ է. աշխարհը հանդերձյալ կանչում է ինձ: Ես ձեզ ու իմ հետնորդներին անծայրածիր, ազատ Հայք եմ թողնում՝ **բնավ չակնկալելով, որ ինձ հատուցեն փառքի հուշասյունով**: Լսե՛ք՝ ինչ եմ պատգամում իմ որդի Արտավազդին և Հայքին համայն: Զավա՛կս, մեր հողը հայրենյաց երկու զենքով պիտի պահես. մեկը սուրն է, մյուսը՝ լեզուն: Սուրը կարող ես պատյանը դնել, վերստին հանել, կոտրել, նորը կռել: Եթե մայրենին պատյանի մեջ առնես, այլևս երբեք չես հանի և ոչ էլ կստեղծես նորը: Ամենայն կորուստ գտանելի է. հայոց լեզուն կորցնելով՝ կկորցնես և՛ վարքը հայոց մեծաց, և՛ Հայքը համայն, և՛ ապագան մեր ասպնջական ու ազատախոհ ազգի: Հգորացրո՛ւ երկիրդ՝ ի հեճուկս օտարների: Աներեր պահի՛ր գահդ, **որ հայոց մայրաքաղաքը երբևէ չթափառի տերության այս ու այն կողմերում**:

Որդի՛ս, քո ձեռամբ ամփոփի՛ր մարմինս Հայքին մոտ. ես սիրտս կվերածեմ բյուրավոր հյուլեների, կվերածնվեմ յուրաքանչյուրի հայի մեջ, և հոգիս հովանի կլինի ձեզ հավիտյան:

Տապանաքարիս թող գրված լինի. «Նա այստեղ չէ. փնտրեցե՛ք նրան ամեն հայի մեջ...»:

Իսկ դուք, դպիրնե՛ր, **քերթեցե՛ք իմ պատգամը մագաղաթներին, որոնք ավելի երկար կյանք ունեն, քան աստվածներն ու արքաները հայոց աշխարհի**:

1. Մեկնաբանի՛ր տեքստում ընդգծված նախադասությունները: (3 միավոր)
2. Բնութագրի՛ր Տիգրան Մեծին 1-2 նախադասությամբ: (2 միավոր)
3. Մեկնաբանի՛ր «Հայրենիքը նախ և առաջ մայրենի լեզուն է» թևավոր խոսքը»: (2 միավոր)
4. Տեքստից դո՛ւրս գրի՛ր գրաբարյան կամ գրաբարից առաջացած քերականական ձևերի չորս օրինակ: (1 միավոր)
5. Գրի՛ր *գալարափող, տարփողել, բոլորակաձև, կորովի, սնդուսափայլ, կաթոզին, ասպնջական, հյուլե, հովանի, քերթել* բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (2 միավոր)
6. Տեքստից դո՛ւրս գրի՛ր շրջուն շարադասության հինգ օրինակ: (1 միավոր)
7. Տրված եռյակներից ընտրի՛ր մեկական բաղադրիչ և կազմի՛ր բարդ ածանցավոր բառեր. վարչապետ–անստորագիր–սրբազան, սարսռագոլու–անակնկալ–անառիկ միանձնուհի–թխաչյա–անվեհեր, եռակցում–ուղեկալ–գնդացրորդ (2 միավոր)
8. Չորս նախադասությամբ արտահայտի՛ր *լեզու* բառի բազմիմաստությունները: (2 միավոր)
9. Գրի՛ր շարադրություն «Գրավի՛ր բարձունքը» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)